ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ԲՄ)
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

11.07.2019թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետ, գնդապետ Հ. Կարապետյան,
Գնահատողներ՝
ՀՀ ԶՈՒ ԻԶՎ Ս բաժնի պետ, գնդապետ Յու. Եսայան.
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության գլխավոր մասնագետ Տ. Գասպարյան,
ՀՀ ԶՈՒ ԻԶՎ Ս բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մուրադյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀՇ 2-րդ դասի առաջատար ծառայող Գ. Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Գևորգյան)

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 որոշումը քննարկելու վերաբերյալ.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի «Սլացք» ՓԲԸ-ի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ «Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 որոշումը քննարկելու վերաբերյալ.

(Գ.Գևորգյան)

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/37 որոշման համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը դադարեցրել է «Սլացք» ՓԲԸ-ի հայտը մերժելու և «ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու մասին 15.05.2019թ. թիվ 5 արձանագրությամբ կայացրած որոշումը.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի «Սլացք» ՓԲԸ-ի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ «Սլացք» ՓԲԸ-ի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ.Գևորգյան)

2.1 «Սլացք» ՓԲԸ-ի հայտով ներկայացրած և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված համատեղ գործունեության պայմանագիրը վերաբերվում է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ապրանքների մատակարարմանը, այնինչ կոնսորցիումի պայմանագիրն առաջին հերթին իրենից պետք է ներկայացնի այդ պայմանագրի կողմերի համատեղ մասնակցությունը համապատասխան ընթացակարգին, ինչպես նաև «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված համատեղ գործունեության պայմանագրում հստակ նշված չէ, թե Գործընկեր 2-ը ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափորոշիչներից որն է ներդնելու որպես ավանդ: Ուստի 11.07.2019թ., հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակցին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է արձանագրված անհամապատասխանությունները, և 15.07.2019թ. նիստը շարունակվել է:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ.Գևորգյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքին և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ է ներկայացրել 3 մասնակից.

Հ/հ	Ապրանքի անվանումը	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			1-ին տեղ զբաղեցնող կազմակերպության		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	Ընդհանուր		առանց ԱԱՀ	Ընդհանուր
1	զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր)	դրամ	1	110910140	«Սլացք» ՓԲԸ (կոնսորցիում Սամվել Տեր-Գրիգորյան ԱՁ)	85955358.5	103146430.2	«Սլացք» ՓԲԸ (կոնսորցիում Սամվել Տեր-Գրիգորյան ԱՁ)	85955358.5	103146430.2
					«ՏԻԳՎԱՆ» ՍՊԸ (կոնսորցիում «ԵԱՆՀԱՑ ԷՍԷՍԵ ՄԱՁԻՆԵՐԻ ԿՈ.» ՍՊԸ)	87495000	104994000			
					«ՌԻՄԿ-ԱՎՏՈ» ՍՊԸ	108691938	108691938			

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին

(Գ.Գևորգյան)

4.1 15.07.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-ին տեղ զբաղեցնող է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (կոնսորցիում Սամվել Տեր-Գրիգորյան ԱՁ-ի հետ):

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

4.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Գևորգյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ԲՄ ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Հ. Կարապետյան

Գնահատող Յու. Եսայան

Գնահատող Տ. Գասպարյան

Գնահատող Ա. Մուրադյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան